

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ռ Ի Մ 20/4

22 մայիսի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 08.05.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի 02.05.2012թ-ի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 20.03.2012թ. թիվ 1101998 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 02.03.2012թ. թիվ 1101998 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (իրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ-դրամակալային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 20.03.2012թ-ին կազմվել է թիվ 1101998 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արամ Մանուկյանի կողմից 03.03.2012թ. ժամը 16:00-ին Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի ք.Երևան, Մաշտոցի 49 հասցեում գտնվող «Մերի» խանութ-սրահից կատարվեց հսկիչ գնում 10.000 դրամի չափով (սերուցքային տորթի պատվեր): Հսկիչ գնման մասով վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գանձապահ-վաճառողուհի Տարթևիկ Սարգսյանը գումարը ստանալիս չմուտքագրեց «ԴՄ (գումարի մուտքագրումը կատարվել է 16:07-ին՝ գնորդի հեռանալուց հետո) և համապատասխան գումարի «ԴՄ կտրոն կտրոն չտրամադրվեց (միայն տրամադրվել է նախնական պատվերի կտրոն): Հսկիչ-գնում կատարելուց հետո՝ ժամը 16:10-ին, ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 16:15-ին «ԴՄ-ից դուրս բերվեց թիվ 0276 <Z> հաշվետվություն, որում ներառված էր կատարված վճարման արժեքը: Ապրանքները (նախնական պատվերը) ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից հետ վերադարձվեց Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանին, և հետ ստացվեց հսկիչ գնման գումարը: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «ԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամակալային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի գանգատում մասնավորապես նշված է.

Սույն թվականի մարտի 3-ին ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության գլխավոր հարկային տեսուչ Ա.Մանուկյանը պատվիրել է տորթ 10000 դրամ արժողությամբ: Վաճառողուհի Տարթևիկ Սարգսյանը տրամադրել է պատվերի կտրոնը, վերցրել գումարը և մոտեցել «ԴՄ-ին՝ մուտքագրելու գումարը: Քանի որ «ԴՄ-ն դանդաղ է տպում՝ մոտ 25 վարկյան, տեսուչն այդ ընթացքում դուրս է եկել խանութից: Վարկյաններ անց ներս է մտել հարկային տեսուչ Վ.Սևյանը և տեսել, թե ինչպես է տպվելով դուրս եկել «ԴՄ չեկը: Այսինքն, «ԴՄ չեկը չի տրամադրվել հաճախորդին երկար տպվելու պատճառով:

Միևնույն ժամանակ գլխավոր հարկային տեսուչ Ա.Մանուկյանը չի ցանկացել մի քանի վարկյան սպասել մինչև դուրս գա «ԴՄ կտրոնը: Նրա խանութից շուտ դուրս գալը եղել է նպատակային, որպեսզի համարվի, որ հսկիչ-դրամակալային մեքենայի կիրառման ճշտության ստուգման ընթացքում կատարվել է խախտում:

Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանը համաձայն չէ կազմված ակտի հետ, քանի որ վաճառողուհի Տաթևիկ Սարգսյանը գումարը մուտք է արել ՀԴՄ և չի թաքցրել շրջանառությունը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանը խնդրում է չեղյալ համարել 20.03.2012թ-ին կազմված թիվ 1101998 ստուգման ակտը:

« ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում գլխավոր հարկային տեսուչ Արամ Մանուկյանը նշեց, որ 03.03.2012թ. ժամը 16:00-ին Ա/Ձ Հասմիկ Մարկոսյանի ք.Երևան, Մաշտոցի 49 հասցեում գտնվող «Մերի» խանութ-սրահից կատարվել է սերուցքային տորթի պատվեր, որի համար կանխիկ վճարվել է 10.000 դրամ: Գանձապահ-վաճառողուհի Տաթևիկ Սարգսյանը գումարը ստանալուց հետո այն չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն կտրոն չի տրամադրել: Արամ Մանուկյանը պնդեց, որ կատարված պատվերի դիմաց վճարված գումարի դիմաց գանձապահ-վաճառողուհի կողմից տրամադրվել է միայն նախնական պատվերի կտրոնը: Ընդ որում Արամ Մանուկյանը գանձապահ-վաճառողուհուն հարցրել է, թե իր փոխարեն այլ անձ ներկայանալու դեպքում կարող է արդյոք վերցնել պատվիրված տորթը, գանձապահ-վաճառողուհին պատասխանել է, որ հիշատակված նախնական պատվերի կտրոնի ներկայացման դեպքում որևէ խնդիր չի առաջանա: Որից հետո Արամ Մանուկյանը դուրս է եկել խանութից, իսկ վճարված գումարի ՀԴՄ մուտքագրումը կատարվել է միայն իր հեռանալուց հետո:

Հանձնաժողովը գտնում է, որ գանձապահ-վաճառողը կատարված պատվերի դիմաց գումարը գանձելուց անմիջապես հետո այն պետք է մուտքագրեր ՀԴՄ, դուրս բերեր համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն և նախնական պատվերի կտրոնի հետ միասին հաճախորդին տրամադրեր նաև ՀԴՄ կտրոնը: Քննարկվող դեպքում գումարը ՀԴՄ է մուտքագրվել միայն հաճախորդի հեռանալուց հետո:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել են « Հառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Տակիչ դրամարկային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո ղ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԱՍՐՍԵՂՅԱՆ